Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 765 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԵՐԿԱՐՕՐՅԱ ԴՊՐՈՑ»

1.	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնապատ և Մարտակերտի շրջանի Կիչան, Մարտունու շրջանի Սպիտակաշեն համայնքների դպրոցների աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու, կրթական հավասար հնարավորություններ ապահովելու և մանկավարժական համապարփակ մոտեցման միջոցով աշակերտների ու նրանց ընտանիքի զբաղվածության և այլ կարիքներին արդյունավետ աջակցելու նպատակով դպրոցներում երկարօրյա ենթակառուցվածքների ստեղծում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Բարնաբաս» հիմնադրամ (Unit 23, Ash Industrial Estate, Kembrey Park, Swindon, SN2 8UN, Անգլիա, Մեծ Բրիտանիա), «Սատարենք մեր հերոսներին» բարեգործական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն 0009, քաղ. Երևան, Վերին Անտառային 146/1 տուն 70):
4.	Ծրագիրը կատարողը	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Բուզանդ 1, 31, ՀՎՀՀ՝ 02834897):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնապատ, Մարտակերտի շրջանի Կիչան և Մարտունու շրջանի Սպիտակաշեն համայնքներ Կրթության բնագավառ:

6.	Ծրագրի բյուջեն	47,052,070 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնապատ, Մարտակերտի շրջանի Կիչան և Մարտունու շրջանի Սպիտակաշեն համայնքների դպրոցներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի նոյեմբերի 9-ից մինչև 2023 թվականի մարտի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Յուրաքանչյուր դպրոցում վերանորոգվելու և արդիականացվելու են (կահավորվելու են) 2-ական դասասենյակ՝ տարրական և միջին դպրոցների համար 2022 թվականի նոյեմբերի 9-ից - 2023 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 25,878,640 դրամ գումարի չափով: 2. Յուրաքանչյուր դպրոցում կառուցվելու է ճաշարան, խոհանոց և պահեստ՝ տաք սնունդ տրամադրելու համար 2022 թվականի նոյեմբերի 9-ից - 2023 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում 21,173,430 դրամ գումարի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Քանդման աշխատանքներ՝ 1,942,000 դրամի չափով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում): 2. Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 12,983,760 դրամի չափով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում): 3. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 8,655,840 դրամի չափով (հարկային արտոնություններ չեն ակնկալվում): 4. Կահույքի և ուսումնական սարքավորումների ձեռքբերում՝ 8,040,410 դրամ (հարկային արտոնություններ ակնկալվում են): 5. Ճաշարանային սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 15,430,060 դրամի չափով (հարկային արտոնություններ ակնկալվում են):
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Սույն ծրագրով կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքին ակտիվորեն ներգրավված են Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարու-

		թյունը, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, «Բարնաբաս» հիմնադրամը, «Սատարենք մեր հերոսներին» ՀԿ-ն, Խնապատ, Կիչան և Սպիտակաշեն գյուղերի համայնքապետարանները:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և «Բարնաբաս» հիմնադրամի կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվություններ կներկայացվեն բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

26.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ